

ՍԻՈՆ

Բ. ՏԱՐԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԹԻՒ 9.

ԱՄՍԱԳԻՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 30
1877.

ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԱՄԱՐԱՅԻ ԿԻՆՈՋ

Յիսուսի ամենահաւատարիմն և սիրելի աշակերտն Յովհաննէս կը պատմէ Ս. Աւետարանին մէջ Աստուածորդւոյն Յիսուսի մի տեսութիւնը եւ խօսակցութիւնը՝ Հրեից ազգէն անարգուած, նոցա հետ հաղորդակցութենէ մերժուած, անարդ և պիղծ համարուած մի խեղճ Սամարացի կնոջ հետ։

Յիսուսի սոյն արարքն բաց 'ի վերջի մասերէն, որով Յիսուս աստուածորէն կը յայտնէ կնոջ գաղանիքներն և կինը հաւատ կ'ընծայէ նորա Աստուածութեան՝ եթէ մարդ առանց ուշադրութեան և խորին մտադրութեան ընթեռնու, կը թուի իրեն մի անեշան կամ մի այնպիսի հասարակ դիպուած, որոյ նմանը շատ անգամ շատ մարդուեւս կրնայ պատահած լինիլ իւր կեանց ընթացքին մէջ. որովհետեւ շատ անգամ կրնայ պատահիլ աշխարհի մէջ, որ հարկն ու նեղութիւնը ամենամբարտաւան, մեծամիտ եւ արհամարհոտ մարդն անգամ այնքան խոնարհեցնէն, որ ստիպուի իւր արհամարհած եւ անարգած մարդէն օգնութիւն խնդրել, թէև ակամայ կամքի և մեծ դժուարութեամբ. մարդկային ակարութեան մեծ հարկի այս պահանջն՝ կրնայ այս կարծիքն յառաջ բերել Յիսուսի այն Սամարացի կնոջ հետ

digitised by A.R.A.R.@

ունեցած տեսութեան նկատմամբ, սա-
կայն Աստուածային ամենակարողութիւն
մատ, զոր ունէր Յիսուս լիովին իբրեւ
ճշմարիտ Աստուած և Որդի Աստու-
ծոյ, մարդկային մտաց այս ենթադը-
րութիւնն կը ցրի խապտռ և կ'ոչնչա-
նայ, որուն կը յաջորդէ մի բոլորովին
տարբեր զգացում և տարբեր խորհր-
դածութիւն և որ որքան նուրբ և խո-
րաքննին լինի, այնքան հիացումն եւ
բերկրախառն զարմանք կը պատճառէ
մարդոյ հոգւոյն. արդարև եթէ մարդ
ուշադրութեամբ ընթեռնու եւ մը-
տադրութեամբ իմաստասիրէ Յիսուսի
սոյն ամենապարզ արարքը՝ աքանչանա-
լով կը տեսնէ անոր մէջ նորա պարզու-
թեան և սովորականութեան հետ մի-
ասին մի այնպիսի վսեմութիւն և բար-
ձրութիւն, որոց վերայ մարդոյ սիրտը
կը զեղանի և հոգին կը բերկրի անպա-
տում հիացմամբ. որովհետև Աստու-
ծոյ Որդւոյն սոյն արարքն դիպուածի
արդիւնք կամ մի աննպատակ գործ
չէ, այլ կանխատեսութեամբ և յա-
տուկ նպատակաւ գործուած նշանա-
ւոր իրողութիւն է. որոյ մէջ այնպիսի
մեծ խորհուրդներ, վսեմ զգացու-
թիւններ եւ բարձր նպատակներ կը
պարունակին, զորս արժան է որ ամեն
մարդ, եւ նա մանաւանդ Քրիստոնեայ
մարդ՝ գիտնայ և իմանայ. ուստի եւ
արժան է որ սոյն փոքրիկ եւ պարզ
պատմական դէպքն առարկայ լինի մեր
ուշադրութեան և խորհրդածութեան
որքան որ կրնայ թափանցել մեր մտաց
տեսութիւնն և որքան որ կրնայ զբրել
մեր հոգւոյ լոյսն. և որպէս զի մեր սի-
րելի ընթերցող հաբք և եղբարք կա-
րող լինին աւելի լաւ հասկանալ և ու-
շադրութեամբ 'ի միտ առնուլ, հարկ
կը համարիմ նախ կրկնել ատ նոյն
համառօտ պատմութիւնը իւր ման-
րամասնութեամբ և պարզութեամբ.
զոր հետեւեալ կերպիւ կը նկարագրէ
Սուրբ Աւետարանիչն Յովհաննէս.

Աստուածորդին Յիսուս, որ երբեմն
քարոզելով և երբեմն եւս հաղածա-
կան քշուելով Հրէաստանի մէջ աս-
տանդական կը թափառէր, մի օր եւս
Փարիսեցւոց վատ նախանձէն խուսա-
փելու համար Հրէաստանը թողուլ՝
երբ Գալիլեա կը վերադառնար, Սա-
մարիայէն անցնելու ատեն կը հանդի-
պի նորա Սիւքար անուանեալ մէկ քա-
ղաքին, որոյ մէջ կը գտնուէր Յակոբ
նահապետի փորած ջրհորներէն մին.
կը կարծուի թէ նոյն ճանապարհորդու-
թիւնը ամառան եղանակի մէջ, օրուան
վեցերորդ ժամուն լինելով՝ Յիսուս, որ
միշտ հետի կը ճանապարհորդէր, իբ-
րեւ մարդ՝ յոգնած և վաստակաբեկ
եւ արեգական միջօրեայ ճառագայ-
թից հրատապ ջերմութենէն նեղուե-
լով, մի քիչ յոգնութիւն առնելու
եւ զովանալու համար, կը նստի այն
ջրհորի մօտ փոքր ինչ հանգչելու մտօք.
մի և նոյն ժամանակ նոյն քաղաքի բը-
նակիչներէն կին մը կուգայ նոյն աղբե-
րէն ջուր հանելու՝ անշուշտ իւր տան
համար. այս միջոցին Յիսուս, որ մի-
նակ էր անդ, (որովհետեւ իւր աշա-
կերտներն քաղցած լինելով՝ գնացած
էին նոյն քաղաքէն կերակուր գնելու)
կը խնդրէ այն կնոջմէն, որ իւր քաշած
ջրէն իրեն եւս խմել տայ. կինը նկա-
տելով որ խնդրողն մի Հրէայ է, զար-
մանալով նորա խնդրոյն վերայ՝ կը պա-
տասխանէ թէ՝ Դու որ Հրէայ ես՝
ինչպէս ինձմէ ջուր կը խնդրես՝ Սա-
մարացի կնիկէ մը. որովհետեւ Հրէայք
Սամարացւոց հետ յարաբերութիւն չեն
մտներ. Յիսուս առանց նորա սոյն ի-
րաւացի զարմանաց որ և է բացատ-
րութիւն տալու՝ մի բոլորովին տար-
բեր պատասխան կը տայ թէ՝ եթէ
գիտնայիր դու Աստուծոյ պարգեւնե-

digitised by A.R.A.R.@

ը և ճանաչէիր թէ ով է քեզմէ ջուր խնդրողն, անշուշտ դու անոր կը խնդրէիր և նա կը տայր քեզ կենդանի ջուրը. պարզապէս և ռամիկ կիներ առանց բան մը իմանալու իւր խնդրամատոյց ուղեւորին այս աւելի զարմանալի պատասխանէն և եւս զարմացած՝ կ'ըսէ. Տէր, ջրհորը խոր է և դու դոյզ անգամ չունիս. ուստի ուրեմն պիտի կարողանաս կենդանի ջուր տալ ինձ. միթէ դո՞ւ մեր հայր Յակոբէն մե՞ծ մէկն ես՝ որ այս ջրհորը մեզ թողուց. ուրկէ թէ ինք խմեց և թէ իւր որդիքն ու խաշինքը. Յիսուս առանց իւր խօսակցութեան եղանակը փոխելու՝ կարծես և եւս զարմանք պատճառելու մտօք արդէն զարմանահար խեղճ կնոջ կը պատասխանէ մի և նոյն միթին բայց վստահ լեզուով թէ՝ ամէն ով որ այդ ջրէն կը խմէ կրկին անգամ կը ծարաւի. իսկ այն որ իմ տուած ջրէս խըմէ, յաւիտեան չը պիտի ծարաւի. այլ այն ջուրը զոր ես անոր պիտի տամ, պիտի լինի անոր համար յաւիտենական կենաց մէջ բղխած ջրոյ աղբիւր. կինը անշուշտ դարձեալ առանց բան մը իմանալու Յիսուսի խօսքերէն, միայն նկատելով որ նա կենաց դիւրութեան համար մի լաւ բան կը խոստանայ կը պատասխանէ՝ Տէր տուր ինձ այդ ջրէն, որ այլ եւս չը ծարաւիմ և ամէն օր այս տեղէն ջուր տանելու աշխատութենէն ազատուիմ. ուրուն կը պատասխանէ Յիսուս՝ թէ գնայ քու այրդ ատ կոչէ. կինը կը ասէ ըսելով՝ թէ ես այր չունիմ. իսկ Յիսուս յանդիմանական կերպիւ կը պատասխանէ թէ ուղիղ ասացիր, թէ ես այր չունիմ. որովհետեւ հինգ հատ այր փոխած ես և այժմեան ունեցածդ քուկդ չէ, այսինքն ապօրինի է. կինը եւս առաւել զարմանալով այս անծանօթ մարդոյն իւր գաղտնեացը վերաբերեալ հասու լինելուն վերայ, կը կարծէ թէ Յիսուս մարգարէ մը եղած լինի. ուստի հաւատոյ մասին իւր մի տարակոյսը փարատելու համար կ'ասէ Յիսուսին, թէ մեր Հայրերն այս լերանց վերայ երկրպագութիւն կ'ընէին. իսկ դուք կ'ասէք թէ՝ միայն Երուսաղէմն է՝ ուր արժան է երկրպագութիւն ընել. որուն պատասխանելով Յիսուս՝ կ'ասէ թէ ով կին, հաւատա ինձ, որ ժամանակ պիտի գայ, ուր ոչ այն լերանց եւ ոչ Երուսաղէմի մէջ պիտի երկրպագանեն Հօր. դուք կ'երկրպագէք անոր՝ զոր չէք ճանաչեր. իսկ մենք կ'երկրպագեմք անոր, զոր կը ճանաչենք. սակայն պիտի գայ ժամանակ և այժմ իսկ է՝ ուր ճշմարիտ երկրպագուներն պիտի երկրպագանեն Հօր՝ հոգւով եւ ճշմարտութեամբ, որովհետեւ Հայրն ալ այնպիսի երկրպագողներ կը խնդրէ իրեն. Աստուած հոգի է և անոր երկրպագողները պէտք է հոգւով եւ ճշմարտութեամբ երկրպագանեն, եւ այլն.

Արքեպիսկոպոս Աւետարանիչն սոյն հատուածս տրամախօսութեան պատմութիւնը աւարտելէ զկնի՝ կը յայտնէ թէ. այս միջոցին Յիսուսի աշակերտները վերայ գալով, կը զարմանան՝ երբ կը տեսնեն Յիսուսի մի այնպիսի կնոջ հետ խօսիլն.

Սոյն հատուածս պատմութիւնը իւր նոյնութեամբ ասա կրկնելէն զկնի, այժմ պիտի սկսինք սորա բարոյական նպատակի և իմաստին վերայ մեր տեսութիւը յառաջ բերել, և որպէս զի աւելի պարզ եւ դիւրըմբռնելի լինի՝ աւելի պատշաճ կը համարինք զայն մասանց վերածելով, հետզհետէ իւրաքանչիւրի վերայ ընել մեր տեսութիւնը. ուստի հետեւեալ կերպիւ կը բաժնենք. Ա. Յիսուսի ջուր խնդրելու նպատակը և կնոջ զարմանք յայտնելու պատ-

digitised by A.R.A.R.@

ձառը. Բ. կնոջ ստելը և Յիսուսի նոր գաղտնիքը յայտնելը. Գ. կնոջ հաւատքը եւ աղօթատեղւոյ մասին առ Քրիստոս ուղղած հարցումը. Դ. առ այս Յիսուսի տուած բացատրութիւնը և իւր Աստուածութեան յայտնութիւնը առ կինն. Ե. Յիսուսի աշակերտաց զարմանքը սոյն տեսութեան վրայ։

(Շարունակելի.)

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԱՂԷՏՆԵՐ

Կարելի է թէ ընթերցողք կարծեն, որ ներկայ պատերազմի տխուր հետեւանաց վերայ պիտի խօսիմք, որոց ենթարկուած է համայն Թուրքիա. բայց մեք այդ առօրեայ պատերազմէն աւելի սոսկալի մի պատերազմ պիտի ցուցնեմք, որ քան զառաջինն աղէտալի է, քան զառաջինն աւերիչ եւ քանդիչ։ Այս պատերազմը ժողովրդեան տգիտութիւնն է, որ աղբիւր է բարոյական և նիւթական ամեն աղէտից եւ ամեն թշուառութեանց։ Առաջնոյն մէջ՝ դեմերնիս թշնամի մի կայ, որ մեր իրաւանց, մեր հայրենեաց և ազատութեան կը սպառնայ. որով մեք իբրեւ զաւակ երկրին, իբրեւ իրաւանց տէր և իբրեւ մարդ՝ ազատութեան սիրահար, կը ստիպուիմք զէնք առնուլ և թշնամւոյն դիմադրաւել, կամ յաղթահարել եւ կամ նահատակիլ ազատութեան, իրաւանց և հայրենեաց եռոտանեայ սեղանին վերայ. իսկ երկրորդին մէջ մեք եմք մեր թշնամին, մեք մեր անձին դէմ կ'ոգորիմք, մեր իրաւունքը մեր վատ ու եսական կրից կը զոհեմք. մեր մանկուոյն բարոյական և նիւթական հայրը անոր ձեռքէն ու բերանէն կը խլեմք. վերջապէս կը զոհեմք զմեզ, կը զոհեմք ընտանիքը և կը զոհեմք մատաղ սերնդեան ապագայն առանց սոսկալու անիծից այն շանթերէն, որով ապագայն զմեզ պիտի հարուածէ, նախատանաց այն սեւ դրոշմներէն, որք մեր ճակատը պիտի զրոշմաւորեն իբր յաւիտենական դատապարտութիւն։

Այս օրինակ մի պատերազմ, որ մեր ազգին նման ազգերու քաղաքական պատերազմը կը համարուի, շատ պատճառներէ յառաջ կը գայ, բայց ամենամեծ պատճառ համարուած է մեր ազգին համար Առաջնորդական Խնդիր ըսուածը։ Կարելի է ըսել, որ վերջին տարիներուս մէջ մի գաւառ չը մնաց ազատ այս աղգաւնաս խնդրոյն հետեւանքներէն. գաւառ չը մնաց, ուր հմմասեռ, համաբիւն և համազգի եղբարք՝ իբրեւ գարաւոր արեանարբու թշնամիներ զիրար նախատած, զիրար մրոտած, միմեանց պատիւը, իրաւունքը ոտնակոխ ըրած չըլլան։ Ուստի՞ յառաջ կը գան այս ամեն չարիքները։ Առաջնորդի մը փոփոխութենէն։ Առաջնորդք մեծ մասամբ իբրեւ անձնարան հովիւներ՝ երբ գաւառի մը հասարակութեան հովիւ կամ տեսուչ կը կարգուին, փոխանակ ըստ կոչման եւ պարտաւորութեան՝ ժողովուրդը մի եւ նոյն հայրական սիրով և համակրութեամբ սիրելու, խոխրներ կը դնեն. զանոնք, որք աւելի յոյս կը տան իրենց փորն ու քսակը լեցնելու, կը խնկարկեն և անոնց կամարար գործիներն կ'ըլլան. հասարակ ժողովուրդը կը նեղուի եւ կը տառապի, փոյթերնին չէ. ժողովուրդը կ'ողբայ, կ'արտասուէ, անոնց սրտին վերայ կամիլ մը չիյնար. եւ

digitised by A.R.A.R.@